

## Ջորջո Ագամբեն

### ՓԱՍՔՈՒԼԻ ԵՒ ՁԱՅՆԻՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԻՒՆԸ

(Լոյս տեսած *Categorie italiane: Studi di Poetica e di letteratura* հատորին մէջ, Վենետիկ, Marsilio Editori, 1996):

(Թարգմանութիւն հանդերձ ծանօթագրութեամբ՝ Մարկ Նշանեան)

*Ջանֆրանկո Քոնթինիին*

1. Ջանֆրանկո Քոնթինիին առաջինն էր, որ Ջովաննի Փասոլիի ֆերթողագիտութեան մէջ գիտցաւ կարդալ մեռեալ լեզուով մը աշխատելու ձգտումը, լատիներէն բանաստեղծութիւն գրելու իր սոսկ կարողութեանն անդին: Եւրոպայի բոլոր մեծ անկումապաշտներուն յատուկ նկրտումին հետեւելով (նկրտում մը, որ սակայն Իտալիոյ մէջ աւելի ուժեղ դրոշմ ձգած է), Փասոլին ալ – Քոնթինիին համաձայն – ուզած է նոր լեզուով մը արտայայտուիլ, ու առ այդ՝ լեզուին առջեւ կանգնած է ինչպէս պիտի կանգնէր «ֆերթողական առարկաներու դէմ յանդիման, որոնք ատենօք կենսունակ էին եւ այսօր կրկին կեանքի կանչուելու կը կարօտին»\*: Ատկէ իր սովորութիւնը՝ առօրեայ լեզուին մասնայատուկ լեզուներ կցելու («հասնելով ամենէն մասնայատուկին՝ անուններու ձայնային շարուածքներուն»\*\*). ատկէ նաեւ՝ ձայնարկութիւններու ապակամ նախա-ֆերականական լեզուին դիմելու յամառութիւնը («թռչուններու անտանելի ներկայութիւնը», որ այդքան կը խանգարէր Փինթորը): Աւելորդ պիտի ըլլար հոս անգամ մը եւս այդ ախտանանաչումին ճշգրտութեան վրայ շեշտը դնելը: Փոխարէնը՝ նկատե՛նք որ Քոնթինիին կրնար Փասոլիի մէկ ուրիշ գրուածքը մէջբերել, որուն մէջ մեռեալ լեզուի ֆերթողագիտութիւնը որպէս այդ բանաձեւուած է բացայայտ կերպով: *Pensieri scolastici*-ին մէջ ի հարկէ՝ տեղ մը կը վիճաբանի դպրոցներէն

---

\* Gianfranco Contini, «Il linguaggio di Pascoli» [Փասոլիի լեզուն], *Varianti i altra linguistica* գիրքին մէջ լոյս տեսած, Einaudi, Թորինո, 1970, էջ 238:

\*\* Անդ, էջ 237:

ներս յունարէնի ուսուցումը ջնջելու գաղափարին դէմ, ու կը գրէ հետեւեալը. «բանաստեղծներու լեզուն միշտ մեռեալ լեզու մըն է», ու անմիջապէս ետքը կ'աւելցնէ՝ «տարօտինակ բան – մեռեալ լեզու մը որ կը գործածուի աւելի կենսաւորելու համար մտածողութիւնը»:

Այս վերջին նախադասութենէն պիտի մեկնինք մեր կարգին, քիչ մը եւս մտորելու համար մեռեալ լեզուի եւ քերթողութեան միջեւ յարաբերութեան մասին, եւ այս ձեւով՝ Փաստուիի քերթողութիւնը նորովի հարցադրումի մը ենթարկելու համար, այս անգամ խնդրոյ առարկայ դարձնելով ո՛չ թէ իր քերթողագիտութիւնը, այլ իր թելադրութիւնը. քերթողութեա՛ն թելադրութիւնը, եթէ այդ բառին մէջ (գոր փոխ կ'անոնեմք միջնադարեան քերթողագիտութեան բառապաշարէն, գիտնալով սակայն որ երբեք չէ դադարած ան մեր բանաստեղծական աւանդութեան մէջ գործածական ըլլալէ) լսենք նոյն ինքն՝ խօսքի սկզբնական յայտնակերպումին փորձընկալումը: Բանաստեղծութիւնը – կ'ըսէ Փաստուի – մեռեալ լեզուով կը խօսի, բայց մեռեալ լեզուն ա՛յն է որ կը կենսագործէ մտածողութիւնը: Մտածողութիւնը կեանք կը ստանայ խօսուած բառերու մահէն: Այդ առումով՝ մտածել, բանաստեղծել համահաւասար է խօսքի մահուան փորձընկալումը կատարելուն, արտաբերել մեռեալ խօսքերը (եւ յարութիւն տալ անոնց): Քոնքիներն կը դիտարկէ որ խօսուած բառերու մահը նոյնքան անձկութիւն կը պատճառէր Փաստուիին որքան արարածներու մահը: Բայց ի՞նչ եղանակով եւ ի՞նչ իմաստով արդեօք մեռեալ լեզու մը կրնայ կեանք պարգեւել մտածողութեան: Ո՞ր եղանակով բանաստեղծութիւնը կրնայ մեռեալ բառերու փորձընկալումը ստանձնել: Եւ վերջին հաշուով՝ ի՞նչ է մեռեալ բառ մը – քանի որ ա՛յդ է հարցը:

2. Տեղ մը *De Trinitate* գործին մէջ (10րդ գիրք, 1, 2) – ուր թերեւս առաջին անգամ ըլլալով արեւմտեան մշակոյթին մէջ կը ներկայանայ մեռեալ լեզուի գաղափարը, որ այսօր այնքան սովորական է – Օգոստինոսը կը խորհրդածէ մեռեալ բառի մը՝ *vocabulum emortuum*-ի մը շուրջ: Ենթադրեմք – կ'ըսէ ան – որ մէկը լսէ անձանօթ նշան մը, բառի մը հնչիւնը, որուն նշանակութիւնը կ'անգիտանայ, օրինակ *temetum* բառը (հինցած եզր մը, ըսելու համար *vinum*): Քանի որ չի գիտեր թէ ի՞նչ կը նշանակէ, անշուշտ պիտի փափաքի տեղեկանալ: Բայց որպէսզի այդ փափաքը գոյանայ, նախ պէտք է գիտնայ որ իր լսած հնչիւնը դատարկ ձայնարկութիւն մը չէ (*inanem vocem*), պարզ *te-me-tum* հնչիւնը, որ նշանակութիւն ունեցող հնչիւն մըն է: Այլապէս այդ եռավանկ հնչիւնը լսողին կողմէ ընկալումի պահուն իսկ լիովին ճանչցուած կ'ըլլայ, բան մը չի մնար անոր մասին սորվելիք.

Երբ արդէն իսկ անոր բոլոր գիրքերը եւ ամէն մէկ հնչիւնի տեւողութիւնը ծանօթ են, ուրիշ ի՞նչ պիտի մնար փնտռելիք անոր մէջ, գայն աւելի լաւ ճանչնալու համար, եթէ

միեւնոյն ժամանակ չգիտնալինք որ նշան մըն է ան, ու եթէ մեր մէջ չդրդէր փափաքը գիտնալու թէ ի՛նչ կը նշանակէ: Ի հարկէ՝ որքան աւելի բառը արձանագրուած է, առանց սակայն լիովին ընկալուած ըլլալու, այնքան աւելի մեծ է հոգիին ցանկութիւնը՝ գիտութեան այդ մնացորդին հասու ըլլալու: Եթէ այդ ձայնին գոյութիւնը միայն գիտնար, առանց գիտնալու որ բան մը կը նշանակէ, հոգին ոչինչ պիտի ունենար փնտռելիք, մէյ մը հնչիւնը ընկալած է որքան որ կարելի է ընկալել: Բայց քանի որ հոգին գիտէ թէ այդտեղ միայն ձայն մը չէ լսածը, այլ նաեւ նշան մը, կ'ուզէ անոր կատարեալ գիտութեան հասնիլ: Բայց նշան մը երբեք ամբողջովին ճանչցած չես ըլլար, եթէ չգիտնաս թէ ինչի՛ նշանն է: Կարելի՞ է ըսել որ մէկը սիրոյ զգացումէն չէ մղուած, երբ կը տեսնենք որ ճգնաշան կերպով կը փորձէ գիտնալ ու իր սորվածէն դրդուելով՝ կը յամառի այդ ուղղութեամբ: Ուրեմն ի՞նչ է սիրածը: Տարակոյս չկայ որ անկարելի է սիրել բան մը զոր չես ճանչնար: Այդ երբեք վանկերուն չէ որ կ'ուղղուի իր սէրը, զանոնք արդէն իսկ կը ճանչնայ: Ուրեմն կարելի՞ է ըսել որ անոնց մէջ իր սիրածը՝ գիտնալն է թէ անոնք բան մը կը նշանակեն:

Այս պարբերութեան մէջ՝ մեռեալ բառի մը փորձընկալումը կը ներկայանայ որպէս արտաբերուած բառի (VOX-ի մը) փորձընկալումը, այն առումով որ ան այլեւս պարզ հնչիւն չէ (istas tres syllabas), բայց տակաւին իմաստ մը չէ ստացած, ուրեմն նշանի մը փորձընկալումն է որպէս զուտ ըսել-ուզել մը, նշանակելու նպատակադրում, որեւէ շօշափելի նշանակութեան մը յայտնութենէն առաջ եւ անկէ անկախ: Օգոստինոսի համար՝ անծանօթ խօսքի մը (verbum incognitum) այդ փորձընկալումը, հնչիւնը եւ նշանակութիւնը իրարմէ զատող արգելական գօտիի սահմաններէն ներս, սիրային փորձընկալումն է, որպէս իմացութեան կամեցողութիւն. նշանակութենէ զուրկ այդ նշանակելու նպատակադրումին կը համապատասխանէ ի հարկէ ո՛չ թէ տրամաբանական հասկացողութիւնը, այլ իմանալու ցանկութիւնը (qui scire amat incognita, non ipsa incognita, sed ipsum scire amat<sup>1</sup>, այսպէս ուրեմն սիրելը միշտ գիտնալու ցանկութիւնն է): Բայց կարեւոր է նշել որ VOX-ը իր սկզբնական մաքրութեան մէջ ցուցաբերող այդ սիրային փորձընկալումին վայրը մեռեալ բառ մըն է, vocabulum emortuum մը, temetum բառն է:

(Անցողակի նշենք հոս որ պրովանսական եւ Stil Novo-ին յատուկ սիրոյ տեսութիւնը<sup>2</sup> անկարելի պիտի ըլլար հասկնալ առանց դիմելու Օգոստինոսի այս պարբերութեան եւ անդրադառնալու որ անոր հակաճանաչութիւնն իսկ է. amor de lonh-ը գրաւականն է<sup>3</sup>, որ ցոյց կու տայ թէ հնարաւոր է իմացութեան եւ ճանաչումի կալուածէն անկախ սէր մը, amare ipsa incognita մը<sup>4</sup>, այսինքն բառի ու խօսքի փորձընկալում մը, որ չի թարգմանուիր երբեք նշանակութեան տրամաբանական փորձընկալումի եզրերով — եւ ինչ

որ պատահական չէ՝ հոս ար ալ ալ բառն ու խօսքը մթասփող է եւ ցանցառ. cars, bruns e tenhz motz<sup>5</sup>):

3. ԺԱ. դարուն, բանաստեղծութենէն իսկ առաջ, միջնադարեան տրամաբանութիւնը վերադարձած է Օգոստինոսէն քաղուած անծանօթ ձայնի փորձընկալումին, անոր վրայ հիմնելու համար նշանակութեան աւելի համընդհանրական եւ սկզբնական չափումը, իմա՝ էոյթին չափումը: Աստուծոյ գոյութիւնը ապացուցող անսելմեան փաստարկումին հակաճանաչող, Գոնիլոն կը հաւաստէ որ կայ մտածողութեան այն-պիսի փորձընկալումի մը հնարաւորութիւնը, որ նշանակութենէն առաջ կու գայ ու որեւէ res-ի չի յղեր, այլ կը բնակի «միմիայն ձայնին մէջ»: Վերաբանաձեւելով օգոստինոսեան փորձարկումը, իր առաջարկածը մտածողութիւն մըն է, որուն առարկան է

ոչ թէ այնքան բուն ձայնը, այսինքն բան մը որ որոշ ձեւով՝ իրաւ է, վանկերու եւ գիրերու հնչիւնն է, որքան՝ լսուած ձայնին նշանակութիւնը. ո՛չ թէ սակայն ինչպէս որ ան նկատի առնուած է մէկու մը կողմէ որ գիտէ այդ ձայնին կողմէ սովորաբար նշուածը, այլ ինչպէս որ նկատի առնուած է մէկու մը կողմէ որ չի գիտեր անոր նշանակութիւնը, եւ կը մտածէ միմիայն հոգիին շարժընթացով, երբ հոգին կը լսէ այդ ձայնը եւ կը փորձէ պատկերացնել անոր նշանակութիւնը:

Դադրած է ուրեմն պարզ հնչիւն ըլլալէ բայց չէ ստացած տակաւին տրամաբանական նշանակութիւն, ահաւասիկ «միայն ձայնին համապատասխանող մտածողութիւն»ը, որ մտածողութեան առջեւ կը բանայ չիմացուած չափում մը. չափում մը, որ հիմնուած է ձայնին գուտ իրողութեան վրայ, միայն VOX-ին վրայ, որպէս նշանակելու աննշանակ նկրտում:

4. Առ Կորնթացիս իր Ա. Թուղթին մէջ (14, 1-25), Պաւղոսը կէտ առ կէտ կը բացայայտէ Կորնթի քրիստոնէական համայնքին լեզուական կիրառումին ուղղուած իր քննադատութիւնը.

Ով որ կը խօսի ի լեզուս [o lalon glossē, իսկ Յերոնիմոսին համաձայն՝ qui loquitur lingua], մարդոց հետ չէ որ կը խօսի, այլ՝ Աստուծոյ. որովհետեւ մէկը չկայ որ հասկնայ զինք, բայց հոգիով կը խօսի խորհուրդներ [...]: Ով որ կը խօսի ի լեզուս ինքնզինքը կը կառուցէ, եւ ով որ կը մարգարէանայ՝ Եկեղեցին կը կառուցէ [...]: Բայց այժմ, եղբայրներ, եթէ գամ ձեզի ի լեզուս խօսելով, ի՞նչ օգուտ պիտի ըլլամ ձեզի, բացի անկէց որ պիտի խօսիմ կա՛մ յայտնութեամբ, կա՛մ գիտութեամբ, կա՛մ մարգարէութեամբ, կա՛մ վարդապետութեամբ: [...] Նոյնպէս եւ դուք եթէ լեզուներով նշանակութիւն ունեցող ճառաստեղծութիւն մը չարտաբերէք, ինչպէ՞ս պիտի գիտնաք թէ ի՞նչ է ըսուածը: Օդին մէջ խօսելու պէս բան մը պիտի ըլլայ [...]: Եթէ չգիտնամ ձայնին (իմաստային) արժէքը, հետս խօսողներուն առջեւ պիտի

ըլլամ խուժ, եւ մէջս խօսողը՝ դուժ, [...] ահա՛ ինչու ի լեզուս խօսողը կ'աղօթէ որպէսզի թարգմանուի, որովհետեւ եթէ ի լեզուս աղօթեմ՝ իմ հոգիս է որ կ'աղօթէ, բայց խելքս ասկէ բան չի քաղեր, կը մնայ անպտուղ: [...] Եղբարք, մի՛ լինիք տղայք մտօք:<sup>6</sup>

Ի՞նչ ձեւով պէտք է հասկնանք այս գրուածքին *lalein glossē*-ն: *Glossa* — Նոր Կտակարանի մեկնագիտութեան ձեռքբերումներուն համաձայն — կը նշանակէ՝ «խօսք մը որ օտար է գործածական լեզուին, մթասփող եզր, որուն իմաստը չի հասկցուիր»: Ա՛յդ է բառին իմաստը արդէն իսկ Արիստոտելին մօտ. բայց Քունտիլիանն ալ կը խօսէր *glossemata*-ներուն մասին, որպէս *voces minus usitate*, որոնք կը պատկանին *lingua secretior*-ին, *quam Grecis glossas vocant*: Ուրեմն «ի լեզուս խօսիլը» (*glossolalia*) անկապ հնչիւններ արտաբերել չէ՛, այլ խօսիլ է բառերով որոնց իմաստը անձանօթ է խօսողին, ճիշդ ինչպէս Օգոստինոսի *temetum*-ի պարագային: Եթէ խօսքին *dynamis*-ը չգիտնամ, կ'ըսէ Պաւլոս (եւ *dynamis*-ը նոյնպէս քերականական եզր մըն է, որ կը նշանակէ՝ «իմաստաբանական արժէք»), խօսողին աչքին պիտի ըլլամ բարբարոս, եւ այն որ իմ մէջս կը խօսի պիտի ըլլայ նոյնպէս բարբարոս: «Իմ մէջս խօսողը» արտայայտութիւնը (*o lalon en emoi*) հարց կը ծագեցնէ, հարց մը զոր լատիներէն թարգմանութիւնը լուծած է *emoi*-ը մեկնաբանելով որպէս *mih*, «ինծի համար»: Բայց Պաւլոսին գրած *en emoi*-ը կրնայ միայն «մէջս» նշանակել եւ Պաւլոսին ի մտի ունեցածը ամբողջովին յստակ է. եթէ խօսքեր արտասանեմ որոնց իմաստը անձանօթ է ինծի, այն որ մէջս կը խօսի — այդ խօսքերը արտաբերող ձայնը, մինչեւ իսկ խօսքին սկզբունքը մէջս — պիտի ըլլայ բարբարոս մը, քանի որ չի գիտեր խօսիլ, չի գիտեր ըսածին իմաստը<sup>7</sup>: Այսպէս ուրեմն «ի լեզուս խօսիլ» կը նշանակէ իմ մէջս փորձընկալել խուժողութ (բարբարոս) խօսքի մը գոյութիւնը, խօսքի մը որուն իմաստը անձանօթ է ինծի, փորձընկալել «երեսխայական» խօսիլ մը («Եղբարք, մի՛ լինիք տղայք մտօք»), որուն պատճառով միտքը կը մնայ «անպտուղ»:

5. Ի՞նչ է Փասքոլիին համար մեռեալ լեզուի փորձընկալումը, եթէ մեռեալ լեզուն «բանաստեղծներու լեզուն» է: Արդեօք իր բանաստեղծութեան մէջ նոյնպէս կարելի՞ է երեւան բերել լեզուական չափում մը, որ ներկայանայ վերը ուրուագծուած «զուտ ձայնի մտածողութիւն»ը եւ «ի լեզուս խօսիլ»ը յատկանշող գիծերով, եւ տեղաւորուի հնչիւնին եւ իմաստին միջեւ, հոն ուր զուտ հնչիւնը պիտի ընկրկի եւ իմաստը պիտի յայտնուի: Եւ եթէ կայ այդ չափումը, արդեօք հնարաւո՞ր է նոր ձեւով մեկնաբանել եւ վերամիաւորել մէկ կողմէ՝ մեռեալ լեզուի քերթողագիտութիւնը եւ միւս կողմէ՝ Փասքոլիի ձայնարկութիւններով աշխատող տողերը, իր ձայնախորհրդապաշտութիւնը<sup>8</sup>: Փասքոլիի գործին դէմ յանդիման՝ տեւաբար «բարբարոս»ի դիրքին մէջն ենք, որ չի հասկնար խօսքերուն *dynamis*-ը: «Կան պզտիկ բառեր որոնք դժուար կը հասկցուին» եւ որոնք – հակառակ անոր՝ որ *I Canti del Castelvechio*-ի վերջաւորու-

թեան (ո՛չ թէ սկիզբը) կայ բացատրական բառարան մը – խորքին մէջ չեն ուզեր մեկ-նաբանուիլ, չեն ուզեր ի լեզուս խօսողի գուտ ըսել-ուզելէն հեռանալ: Ասկէ առաջ՝ Քոնթինին արդէն իսկ նշմարած էր *L'amorosa giornata*-ին մէջ «zillano» բառին գուտն անայնախորհրդանշական արժէքը: Բայց նոյն դիտողութիւնը կրնայինք ընել schilletta, sericcia, accia, gronchio, grasce, stiglie, astile, palestrita, stianza, sprillo, tarmolo, strino, legoro, cuccolo, guaiame բառերուն համար եւ ուրիշ անհամար եզրերու, ինչպէս բոլոր օտարաբանութիւններուն, որոնք կը վիժանան *Italy* եւ *The Hammerless Gun* գործերուն մէջ (վերջինիս պարագային՝ ցրուած թռչնական ձայնարկութիւններուն միջեւ):

Փաստով կ'ակնկալէ ընթերցող մը որ չգիտնայ իր բոլոր գործածած բառերուն իմաստը: Ինչպէս կ'ըսէ «մեռեալ լեզուի բանաստեղծ»ը այդ նոյն անունը կրող գրուածքին մէջ, բանաստեղծութիւնը կրօնքին պէս պէտք ունի «բառերու որոնք կը սքողեն, կը մթագեն իրենց իմաստը, կ'ուզեմ ըսել՝ բառերու որոնք ներկայիս գործածական չեն»\* (եւ որոնք այսուհանդերձ կը գործածուին «մտածողութիւնը կենսաւորելու համար»): Ի լեզուս խօսիլը (լեզուախօսութիւնը, glossolalia) եւ օտարախօսութիւնը (xenoglossia) լեզուի մահուան գաղտնաբառերն են. անոնցմով պատկերացուած է լեզուին դուրս ելլելը իր իմաստաբանական տարածքէն եւ վերադարձը դէպի գուտ ըսել-ուզելու սկզբնական ոլորտը (ոչ թէ սոսկ հնչիւնը, այլ առանձին ձայնի լեզուն եւ մտածողութիւնը): Այսօր պիտի ըսուէր՝ գուտ հնչիւններու մտածողութիւն եւ լեզու, քանի որ ի՞նչ իմաստ կրնայ ունենալ նշանակելու նպատակադրումին վրայ դրուած շեշտը – նպատակադրումի մը որ կը տարբերի սոսկ հնչիւնէն եւ միեւնոյն ժամանակ՝ չի նշանակեր տակաւին – եթէ ոչ անդրադառնալ լեզուի մը հնչիւններուն, այդ բացասական ու գուտ տարբերակիչ գոյակներուն, որոնք (արդի լեզուաբանութեան համաձայն) գուրկ են նշանակութենէ եւ միեւնոյն ժամանակ՝ հնարաւոր կը դարձնեն նշանակութիւնը:

Հոս խօսքը բուն իմաստով ձայնախորհրդականութեան մասին չէ. ոլորտի մը մէջ ենք, որ հնչիւնէն ասդին կամ անդին է, որ ոչի՛նչ կը խորհրդանշէ, այլ պարզապէս կը *ցուցաբերէ* նշանակելու նպատակադրում մը, ուրեմն ձայնը իր սկզբնական գտնութեան մէջ նկատի առնուած. եւ այդ ցուցաբերումին վայրը ո՛չ պարզ հնչիւնն է, ո՛չ ալ նշանակութիւնը, այլ կրնայինք ըսել՝ գուտ grammata-ներն են, գուտ տառերը, ճիշդ ու ճիշդ լեզուի այդ «սեւ սերմ»ին նման, որ *Myrica*-ի «Piccolo aratore»ին մէջ՝ կը ծաղկի հնչիւններով եւ կեանքով լեցուն աշխարհի մը երեսին. նոյն այդ տառերը որոնք «man-

---

\* Giovanni Pascoli, «Un poeta di lingua morte», in *Pensieri e discorsi*, Zanichelli, Boloniam 1907, էջ 166:

nelle»ներու մէջ հաւաքուած են (ահա՛ ուրիշ անծանօթ բառ մը<sup>9</sup>), «Piccolo mietitore»ի տարածքէն ներս մուտք կը գործեն ու իրենց ակօսանքներուն մէջէն կը խօսին, «մեզի պէս, մեզմէ լաւ»:

6. Նոյնանման ձեւով պէտք է նկատի առնենք Փասֆոլիի ձայնարկութիւնները, siccecé, uid, videvitt, scilp, zisteretet, trr trr terit, fru, sii sii-ները, այդ scricchioletti, frulli, sgrigliolii-ները, որոնք կը վիստան Canti-ներու եւ Myricae-ներու տողերուն մէջ, ու բանաստեղծին իսկ կողմէ (հոն ուր ծիծեռնակներու լեզուին մասին կը խօսի) նմանցուած են մեռեալ լեզուի մը, «այլեւս մոռցուած»: Սովորաբար ձայնարկութիւնը կը հրասկցուի որպէս նախաքերականական կամ ապաքերականական լեզու («այդ լեզուն – կը գրէ Քոնթինի – ոչինչ ունի հասարակաց քերականութեան հետ»<sup>\*</sup>): Իր *Հնչիւնաբանութեան սկզբունքներ* գիրքին ներածական բաժնին մէջ, Թրուբեցֆոյ կը գրէ հետեւեալը բնական հնչիւններու ձայնային նմանակումին մասին. «Եթէ մէկը ուզէ որսորդութեան պատմութիւն մը պատմել եւ իր պատմածը աւելի աշխոյժ դարձնելու համար՝ կենդանիի ձայն մը կը նմանակէ կամ ուրիշ որեւէ բնական ձայն-երանգ, ստիպուած է այդ պահուն ընդմիջել իր պատմածը. նմանակուած բնական հնչիւնը ուրեմն արտաքին մարմին մըն է, որ դուրս կը մնայ վերկայացման բնականոն նառասութենէն»<sup>10</sup>:

Բայց իսկապէս վստա՞հ ենք որ Փասֆոլիի ձայնարկութիւնները նախաքերականական լեզու մը կը կազմեն: Ու նախ եւ առաջ՝ ի՞նչ կը նշանակէ «նախաքերականական լեզու»: Արդեօք այդպիսի լեզու մը – մարդկային լեզուի ոչ քերականական չափում մը – որեւէ ձեւով հնարաւոր է:

Հնադարեան քերականագէտները իրենց քննարկումը կը սկսէին ձայնով (fonē): Մարդկային ձայնը, որպէս զտարիւն բնական հնչիւն, չի մտնէր սակայն քերականութեան մէջ: Իրողութիւնը այն է, որ քերականութիւնը կը սկսի առաջին զատորոշումով մը. կայ մէկ կողմը անասուններու «շփոթ ձայն»ը (fonē synkechyménē o agrámmatos, լատիներէն կը թարգմանուի սովորաբար vox illiterata, quae litteris comprehendi non potest, որ չի կրնար գրուիլ, ինչպէս equorum hinnitus-ը եւ rabies canum-ը) եւ միւս կողմը՝ մարդկայինը, որ յօդաւորուած է եւ կրնայ գրուիլ (engrámmatos): Ուրիշ դասաւորում մը, Ստոյիկեաններէն սերած, ձայնը կը յատկանշէ աւելի նրբամիտ կերպով: Դիոնիսիոս Թրակացիի *Téknē grammatiké*-ին մէջ կը կարդանք հետեւեալը.

Ձայներուն մասին պէտք է գիտնալ որ անոնցմէ ոմանք յօդաւոր են եւ կրնան գրուիլ (engrámmatoi), ինչպէս մե՛րը. ուրիշներ յօդաւոր չեն եւ չեն գրուիր, ինչպէս կրակին

---

\* Contini, *Il linguaggio di Pascoli*, էջ 222:

նարնատիրը եւ քարին կամ փայտին նաթիրը. ուրիշներ ալ յօդաւոր չեն եւ այսուհանդերձ կրնան գրուիլ, ինչպէս անբան կենդանիներու նմանակումները, օրինակ՝ brekekéks եւ koí: Այս վերջինները յօդաւոր չեն որովհետեւ չենք գիտեր թէ ի՛նչ կը նշանակեն, բայց engrámmatoί են, քանի որ կը գրուին...: <sup>11</sup>

Պահ մը կեդրոնանա՞նք այս անյօդաւոր եւ սակայն «Քերականացած» ձայներուն, այդ brekekéks եւ koí-երուն վրայ, որոնք այնքան նման են Փաստուիի ձայնարկութիւններուն եւ հարց տանք մենք մեզի. ի՞նչ կը պատահի կենդանիներու շփոթ ձայնին, որպէսզի կարենայ դառնալ engrámmatos, որպէսզի կարենայ ցուացուիլ գիրերով: Մտնելով grammata-ներուն մէջ, գրուելով, կենդանիին ձայնը կը հեռանայ բնութեան անյօդաւոր եւ գրուելու անատակ ձայնէն, եւ ցոյց կու տայ ինքզինք, գիրերուն մէջ, որպէս գուտ ըսել-ուզել մը, որուն նշանակութիւնը անգիտացուած է (այդ առումով՝ լիովին նման Օգոստինոսի ի լեզուս խօսելուն եւ vocabulum emortuum-ին): Միակ ձեւը զայն յօդաւոր ձայնէն զատորոշելու այն է ի հարկէ՝ որ « չենք գիտեր թէ ի՛նչ կը նշանակեն»: Հոս ուրեմն grammar-ն, գիրը, ինքն իրմով իմաստ չունեցող գաղտնագիրն է նշանակելու նպատակադրումի մը, որ իր լրումին պիտի հասնի յօդաւոր լեզուին մէջ. brekekéks-ը, koí-ը եւ կենդանական ձայներու միւս նմանակումները բնութեան ձայնը կը յափշտակեն այն պահուն երբ դուրս կը ժայթքի սուսական հնչիւնի անսահման ծովէն բայց չէ դարձած տակաւին նշանակող լեզու:

Այս դիտարկումներու լոյսին տակ է որ պէտք է քննենք հիմա Փաստուիի ձայնարկութիւնները: Խօսքը այստեղ պարզ բնական հնչիւններու մասին չէ, որոնք գոհանային յօդաւոր ճառասութիւնը ընդմիջելով. Փաստուիին բանաստեղծութեան մէջ ինչպէս որեւէ մարդկային լեզուի մէջ՝ չկա՛յ – բացառուած է որ ըլլայ – կենդանիներու ձայնին ներկայութիւնը. փոխարէնը՝ ինչ որ կայ անոր բացակայութեան մէկ հետքն է, անոր «մեռնելուն» մնացորդը, որ կը Քերականանայ նշանակելու գուտ նպատակադրումի մը մէջ: Քափորնայի schilletta-ին պէս (*Canti di Castelvecchio*-ի մէջ), այդ հնչիւնները չեն պատկանիր որեւէ կենդանի էակի մը. «շուք»ի, մեռեալ կենդանիի մը վզին փաթթուած զանգակ մըն են, որ կը շարունակէ թնդալ չիօսող «պզտիկ տղու» մը ձեռքը: Չայնը — ինչպէս *Canti*-ի նոյն անունը կրող Քերթուածին մէջ – զգալի կը դառնայ «այն պահուն միայն երբ կը մեռնի», ըսել-ուզելու մը նման («այդքա՛ն բաներ ըսելու համար եւ դեռ աւելի՛ն»), որ իբրեւ այդ չի կրնար ուրիշ բան ըսել եւ նշանակել քան թէ յատուկ անունի մը (*Zvaní*) «շունչը»: Այդ անկիւնէն դիտուած՝ մեռեալ ձայնը «Addio»ին մէջ երեւցող ծիծեռնակներու մեռեալ լեզուին համահաւասար է. լեզու մըն է, ո՛չ թէ նախաքերականական լեզու, այլ ամբողջովին եւ բացարձակապէս քերականական լեզու, բառին ամենէն նշգրիտ եւ ամենէն սկզբնական առումով. *fonē engrámmatos, vox litterata*:

7. Գի՛րն է հետեւաբար այն տարածքը որուն մէջ ի լեզուս խօսիլը եւ ձայնարկութիւնը, մեռեալ լեզուի քերթողագիտութիւնը եւ մեռեալ ձայնի քերթողագիտութիւնը կը հանդիպին իրարու, հոն ուր Փասֆոլի կը տեղադրէ բանաստեղծական թելադրուած խօսքի ամենէն իւրայատուկ փորձընկալումը. *տարածքը որուն մէջ պիտի կարենայ լեզուն քաղել այն սկզբնական պահուն, ուր կը ջնջէ ինքզինք, ձայնին (VOX) մէջ մեռնելով, եւ ձայնն (VOX) ալ նոյնպէս՝ քաղել այն կէտին ուր պարզ հնչիւնէն ժայթքելով՝ կ'անցնի (ուրեմն կը մեռնի) նշանակութեան մակարդակին:* Փասֆոլիի բանաստեղծութեան մէջ՝ ի լեզուս խօսիլը եւ ձայնարկութիւնը նոյն վայրէն կը բարբառեն, նոյնիսկ եթէ կը թուին երկու հակառակ ուղղութիւններով անցնիլ անոր մէջէն: Ատկէ՝ յարացուցական բնոյթը այն տողերուն՝ որոնց մէջ ձայնարկութիւնը յօդաւոր լեզուին մէջ կը ներգործէ եւ յօդաւոր լեզուն՝ ձայնարկութեան մէջ.

Finch... finché nel cielo volai  
V'è di voi chi vide... vide... videvitt  
Anch'io anch'io chio chio chio.

Ատկէ նաեւ Փասֆոլիի բանաստեղծութեան մէջ՝ յատուկ անուններու մասնայատուկ կարգավիճակը (յատուկ անունը ըլլալով այն ոլորտը՝ որ գրեթէ անյադճահարելի հարցեր կը ծագեցնէ լեզուաբաններուն առջեւ, եւ որուն մասին Եաֆորսոն կ'ըսէ թէ չունի նշանակութիւն, բուն իմաստով, ու կատարածը՝ պարզապէս կարգանիշը ինքն իրեն յղել է): Եթէ Zvanî ձայնին «շունչ»ն է «այն պահուն՝ երբ կը մեռնի», Lapide-ի մէջ՝ պզտիկ աղջկան մը գերեզմանաքարին վրայ արձանագրուած յատուկ անունը բացայայտօրէն սահմանուած է որպէս «այն մտածումը» թէ ողջը մեռնելով՝ վերջին շունչը կ'արձակէ լեզուին մէջ.

Lascia argentei il cardo al leggiere  
tuo alito i pappi suoi come  
il morente alla morte un pensiero  
vago, ultimo: l'ombra di un nome.

(Օրհնափուշը արծաթէ փշուրներ  
կը հրամցնէ քու թեթեւ շունչիդ ինչպէս  
մեռեալը մահուան՝ աղօտ մտածում մը,  
վերջինը. անունի մը շուքը:)

Եւ Gog e Magog-ի ձայնարկութիւններու շարաններուն մէջ, որոնք Դանթէի Նեմրոդին բարելոնեան լեզուն կը յիշեցնեն,

di Mong, Mosach, Thubal, Aneg, Ageg,  
Assur, Pothim, Cepharr, Alan, a me!

անուններու գուտ լեզուն, որուն մէջ արձանագրուած է մեռեալ ձայնը, կը քայքայուի եւ կը շփոթուի ա՛յն բաներուն լեզուախօսութեան հետ, որոնք «կը սքողեն, կը մթագնեն իրենց իմաստը»:

Այդ «անցք»ին փորձընկալումը – որ Փասֆոլիի բանաստեղծական թելադրանքին վայրն է – մահուան փորձընկալում մըն է: Ի հարկէ՝ միայն մեռնելով է, որ անասունին ձայնը կոչուած է մտնելու իմաստալից լեզուին մէջ որպէս գուտ ըսել-ուզել մը եւ միայն մեռնելով է, որ յօդաւոր լեզուն կրնայ վերադառնալ այն շփոթ արգանդին որմէ սերած է: Բանաստեղծութիւնը գիրի փորձընկալումն է, բայց գիրին վայրը մահն է. ձայնին մահը (ձայնարկութիւն) կամ լեզուին մահը (ի լեզուս խօսիլ), որոնք կը գուգադիպին grammata-ներու կարճատեւ փայլատակումին մէջ:

8. Այդ տարածքին աւելի լաւ կրնանք հասկնալ նաեւ փոքր տղուն տեսարանութիւնը, որուն մէջ Փասֆոլին փորձած է հաւաքել բանաստեղծութեան իր փորձառութիւնը, թելադրանքի եզրերը գործածելով (փոքր տղան որ «մէջդ թելադրուած» է, ինչպէս Դանթէի սերը): Եթէ Փասֆոլիի գրուածքներուն դէմ յանդիման՝ ընթերցողը յանախ Պաւլոսի բարբարոսին կը նմանի, որ չի նանչնար բաներու dynamis-ը, Փասֆոլիի մօտ թելադրանքի փորձընկալումը իրապէս յատկաշնչող պնդումը այն է, որ բանաստեղծին մէջ «խօսող»ը բարբարոս մըն է, որ կը խօսի առանց գիտնալու թէ ի՛նչ է ըսածը, ալիսինքն՝ խօսքը կը հնչեցնէ իր ծննդեան վիճակով, որպէս գուտ ըսել-ուզել եւ անուններու լեզու: Այս սկզբունքներուն հետ յարիւր կերպով՝ փոքր տղուն թելադրանքը կը ներկայանայ գլխաւորաբար ձայնին յղելով («իր ձայնը կը խառնէ մերինին հետ... սրտի տրոփիւնը միայն կը լսէ, պոռչտուք մը, վայնասուն մը [...], կարծես զանգակ մը ըլլար թնդացողը [...], լսելով շաղակրատութիւնը», եւ ինքը երեւան կու գայ որպէս «Ադամը որ առաջին անգամ ըլլալով անուններ կու տայ իրերուն»): Վնական է այս առումով այն իրողութիւնը որ *Canti*-ները փակող «Ritorno a San Mauro»ի քերթուածներուն մէջ, իր կերպարը կ'երեւի որպէս դամբանական կերպար մը, մեռեալի մը ստուերամած կիսադէմը, որ կ'անգայտանայ եւ գրեթէ կը շփոթուի միւս մեռեալին, ալիսինքն՝ մօրը, դէմքի գիծերուն հետ: «Ritorno a San Mauro»ի բոլոր կտորները եզակի փայլ մը կը ստանան եթէ զանոնք կարդանք որպէս երկխօսութիւն մը մեռեալ լեզուին հետ (մայրը) եւ մեռեալ ձայնին հետ (փոքր տղան), որոնք հիմա կը ցուցաբերեն իրենց գաղտնի միութիւնը: «Mia Madre» կտորին մէջ, մանկական ձայնը ի հարկէ մօտը կը մնայ մեռեալ մօր.

Tra i pigolii dei nidi  
io vi sentii la voce  
mia di fanciullo

(Բոյնեբուս և ուղղիւններուն մէջ  
Իմ ձայնս լսեցի  
պզտիկ տղու մը ձայնը)

Եւ «Giovannino»-ի մէջ, պզտիկ տղան գերեզմանատան ծայրը կը բնակի, իր բանաստեղծական պաշտօնին մէջ այլեւս յստակօրէն համարժէք մայրական կերպարին: Եւ այդ դամբանական տեսիլքն է որ կը գտնուի ճիշդ կեդրոնին այն բանաստեղծութեան՝ որուն ամենէն յաջող կերպով ամփոփած է թելադրուածի անձնական փորձը կալումը. «La tessitrice»-ն (Կարուհին) ի հարկէ՝ բանաստեղծին եւ ձայնին միջեւ երկխօսութեամբ մը՝ կը պարփակէ բանաստեղծական խօսքին սարսուզդեցիկ պատահումները:

Հոս – ուրեմն թելադրուածի կորիզին – չի լսուիր «խօսքի մը հնչիւնը», լեզուին ցանցը հիւսող առէջը «լուծ է հիմա» եւ ամէն ինչ տեղի կ'ունենայ «լուակեաց քթումով մը»: Հարցումը երկու անգամ կրկուելէ ետք միայն («Ինչո՞ւ ձայն չի հաներ»), ձայնային կոյսը (փոքր տղայ եւ մուսայ, ձայն եւ մայրական լեզու) կը յայտնաբերէ իր անվերադարձ մահը.

E piange, e piange — Mio dolce amore  
non t'hanno detto? non lo sai tu?  
Io non son viva che nel tuo cuore.

Morta! Sì, morta! Se tesso, tesso  
per te soltanto...

(Եւ լաց եղիր, լաց եղիր: Իմ անուշիկս  
չըսի՞նք քեզի, չէի՞ր գիտեր  
Ես կ'ապրիմ միայն քու սրտիդ մէջ:

Մեռած: Այո՛, մեռած: Եթէ կը հիւսեմ  
Միայն քեզի համար է որ կը հիւսեմ:)

Այսպէս «La tessitrice»-ն կ'ըսէ ճշմարտութիւնը, գործ *Il fanciullino*-ն կը պահէր տակաւին ծածուկ. որ պզտիկ տղան չկա՛յ, որ բանաստեղծութիւնը թելադրող մանկական ձայնը մեռեալ ձայն մըն է, ճիշդ ինչպէս մեռեալ ձայն մը միայն կրնայ քաղել իր թելադրածը: (Ուրկէ՛ անյարիրութիւնը այն քննադատութիւններուն որոնք այդքան յանախ կ'ուղղուին *Fanciullino*-ին — իբր թէ շփոթած ըլլալու «պզտիկ տղան որպէս

բնութիւն եւ պգտիկ տղան որպէս բանաստեղծութիւն»։ հոս խօսքը «բնութեան ձայն»ին մասին չէ՛, որոշակի քերթողագիտութեան մը մասին չէ՛, հարցը ապրողին եւ լեզուին միջեւ առնչումն է, զուտ ժխտական առնչում, ուր ձայն եւ լեզու մէկ կը դառնան մահուան մէջ)։ Փաստովին այդ յատկանիշը կարելի է նկատել որպէս Իտալիոյ մշակութային կերպարանքին մէջ դրոշմուած ամենէն խորունկ գիծերէն մէկը. մեռեալ լեզուով մը աշխատելու կամեցողութիւնը եւ գիտակցութիւնը, այսինքն՝ անձնական եւ արհեստական կերպով կառուցուած լեզուով, որ նշուած իմաստով՝ լեզուախօսական է, «մեկնաբանելու խնդրանօք» կամ առանց խնդրանքի։ Հոս մեր միտքը եկող անունները Ի. դարու ամենէն ծանօթ գրողներու անունները չեն միայն (Գաղղա, Մանգանելլի, Փագոլինի, Նովէնթա, Զանգոթթօ), կան նաեւ արձակագիրներ որոնք երեւութապէս տարբեր կալուածի մը կը պատկանին, օրինակ՝ Լոնգի, որուն մօտ Սերողինէին անդրադարձող փորձագրութեան մէջ՝ «scandelle» (լուսաշիթեր) բառին գործածութիւնը նախադասութեան կ'ընձեռնեն փաստովինեան երանգ մը։ Ա՛յս է այս մարդոց դժուար, առեղծուածային յարաբերութիւնը իրենց մայրենի լեզուին հետ. իրենք զիրենք կը պատկերացնեն անոր մէջ պայմանաւ որ յաջողին գայն զգալ որպէս մեռեալ. կրնան գայն իրե՛նցը դարձնել եւ սիրել միմիայն կոտորակներու եւ կազմախօսական կտորուանքներու վերածելով։ Բէատրիչէին մահը – հոս եւս — կը պայմանաւորէ մեր ամբողջ գրական աւանդութիւնը եւ Փեթրարային Լաւրան (Laura, l'aura) ուրիշ բան չէ եթէ ոչ ձայնին արտաշնչումը – եւ այս ալ, վերջաւորութեան, միայն որպէս «aura morta», «մեռեալ օդ»։

9. Փաստովին համար ուրեմն՝ մարդկային լեզուն միշտ լեզու մըն է «որ այլեւս չի հնչեր ողջերու շրթունքներուն», այն երկակի իմաստով որ ան անհրաժեշտաբար մեռեալ լեզու մը կամ մեռեալ ձայն մըն է, բայց ամէն պարագայի՝ երբեք մարդու մը կենդանի ձայնը չի կրնար ըլլալ, ողջ մէկու մը խօսքը չի կրնար ըլլալ։ Կրնայինք ըսել որ Փաստովին Ֆաւսթին նման՝ իջած է մինչեւ Մայրերու Թագաւորութիւնը, որուն դիցուհիները պահապաններն են այն ամէն ինչին «որ երկար ատենէ ի վեր դադրած է գոյութիւն ունենալէ», ու այդտեղ պէտք է տեսնենք մայր լեզուներու, Սֆալիգերի matrices linguae-ի մէկ կերպարը<sup>12</sup>։ Հոն իջնելով, Ֆաւսթին նման, յայտնաբերած է որ Մայրերը մեռած են, որ անոնց գլուխներուն շուրջ կը սաւառնին միայն «շարժական բայց կեանքէ զուրկ» պատկերներ (նոյնիսկ եթէ հնարաւոր է կախարդութեամբ անոնց մէջ շարժում յառաջացնել, պարել ու երգել տալ)։ Եւ ասոնց հետ նոյնպէս անհասանելի է բնութեան ձայնը։ (Ու արդեօք ճիշդ չէ՞ որ մեր ամէն խօսքը «մեռեալ տառ» է, մեռեալ լեզու, զոր մեռեալներէն ժառանգած ենք եւ ուրկէ չի կրնար երբեք յայտնուիլ որեւէ բան որ ըլլար կենդանի։ Եւ այն ատեն՝ ինչպէ՞ս կ'ըլլայ որ կեանքէ զուրկ այդ բառերն

ու խօսքերը յանկած կը դառնան մեր կենդանի ձայնը, եւ կարն պահի մը տեւողութեամբ՝ մեռեալ տառերը կ'երգեն ու կ'ապրին բանաստեղծի սրտին մէջ)։

Խօսիլ, բանաստեղծել, մտածել կրնան այդ պարագային միայն մէկ բան նշանակել. տառին փորձընկալումը կատարել որպէս սեփական լեզուին եւ սեփական ձայնին մահը։ Այդ է ուրեմն «դպրութեամբ» գբաղիլը, «գիրի մարդ» ըլլալը, այնքան լուրջ եւ այնքան ծայրագոյն է, Փաստուիի աչքին, գիրին փորձընկալումը։ Փաստուի, «որ ետեւէն դիտուած՝ գաւառական վարչակալի մը կը նմանէր», որ ապահովաբար գրած է «անհամար թիւով տգեղ քերթուածներ», իսկապէս «դարավերջի մեր բանաստեղծներէն ամենէն եւրոպականը եղած է»\*։ Ըլլալով բնագանցութեան բանաստեղծը, շրջանի մը երբ ան անկումային վիճակի մէջ էր, մինչեւ ծայրը տարած է նոյն այդ բնագանցութեան սկզբնական առասպելապատումը. ձայնին, ձայնի մահուան եւ տառի յիշողութեան մէջ ձայնի պահպանումին առասպելապատումը։

Եւ նիշդ այդ պատճառով, հոն ուր կ'անդրադառնանք իր ձգած դասին յարիւրութեան եւ նշգրտութեան, պէտք է սակայն նաեւ հարց տանք մենք մեզի, հարցումով որ այստեղ պիտի մնայ ժամանակաւորապէս անպատասխան. կարելի՞ է արդեօք բռնի եւ խօսքի փորձընկալում մը որ չըլլայ վերը բացատրուած իմաստով տառի փորձընկալում։ Կարելի՞ է խօսիլ, բանաստեղծել, մտածել տառէն անդին, ձայնին եւ լեզուին մահէն անդին։

---

\* Giaime Pintor, *Il sangue d'Europa*, Einaudi, Թորինօ, 1965, էջ 57։

---

## Խմբագրական ծանոթագրութիւններ

- <sup>1</sup> «Ով որ կը սիրէ անչնալ անծանօթ բաներ, անոնց անծանօթ ըլլալը չէ՛ որ կը սիրէ, ինչ որ կը սիրէ՝ գանոնք անչնալն է», տե՛ս Օգոստինոս, *De Trinitate*, 10.1.3:
- <sup>2</sup> Խօսքը հոս Dolce Stil Novo կոչուած գրական շարժումին մասին է, որ ծաւալած է Իտալիոյ մէջ ԺԳ. եւ ԺԴ. դարերուն, ենթադրաբար Սիկիլիայէն առնելով իր ծագումը: Շարժումին անունը կը պարտինք անշուշտ Դանթէ Ալիգիէրիին, որ զայն կը գործածէ իր Աստուածային Կատակերգութեան «Քաւարան»ի բաժնին մէջ (24րդ երգ), ու ինքն ալ այդ գրական դպրոցին մեծ ժառանգորդներէն մէկն է: Տե՛ս Արսէն Ղազիկեանի թարգմանութեամբ՝ *Քաւարան*, Վենետիկ, 1905, էջ 231. «Կը տեսնեմ արդ, ըսաւ, այն կապը՝ որ Նոտարոն, Գուիդոնն ու զիս հեռու բոնեց այն քաղցր նոր ոնէն գոր կը լսեմ» (տող 55-57):
- <sup>3</sup> «L'amor de lonh» (Հեռուէն սէրը) ԺԲ. դարու եւրոպացի աշուղին՝ Ժոֆրէ Ռուդելի գործն է (Jaufré Rudel, ենթադրաբար 1147ին վախճանած, 2րդ խաչակրութեան օրերուն, Արեւելք հասնելուն պէս): Այս աշուղին (եւ ուրիշ աշուղներու) հէֆիաթային կեանքը պատմուած է *Vidas* վերնագրով մեզի հասած ու Փրովանսի ժողովրդական լեզուով գրուած հաւաքածոյին շնորհիւ:
- <sup>4</sup> «Սիրել նոյն ինքն՝ անծանօթը»:
- <sup>5</sup> Այս տողը կը պատկանի 12րդ դարու աշուղ՝ Բեմբոյ դ'Աւրբենգային (Raimbault d'Aurenga, 1146-1173): Ահաւասիկ լման հատուածը ուրկէ առնուած է ան.  
Cars, bruns e tenhz motz entrebesc  
pensius-pensanz enquier e serc  
(com si liman pogues roire  
l'estraing roill ni'l fer tiure)  
don mon escur cor esclaire.  
(R d'Aur 1, 19-23)  
[Հագուագիւտ, մթասփող եւ գունաւոր բառեր կը կապեմ իրարու  
խորհելով-մտորելով կը խնդրեմ ու կը փնտռեմ  
(կարծես լեցնելով՝ պիտի կարենայի մաքրել  
կարծրացած մասերուն անտեղի ժանգը)  
Թէ ինչպէս պիտի կարենամ մթին նպատադրումս բացայայտել:]
- <sup>6</sup> Հետեւեցայ հոս Ե. դարու թարգմանութեան: Փակագծի մէջ աւելցուցի «իմաստաբանական» բառը, հոն ուր մեր թարգմանիչները գրած էին պարզապէս «եթէ ոչ գիտիցիմ զգօրութիւն ձայնին», որովհետեւ յունարէն բառն է dynamis, որ կը նշանակէ ի միջի այլոց՝ «գօրութիւն»: Բայց Ագամբէն քանի մը տող վարը կը բացատրէ որ յունարէն dynamis բառը նաեւ քերականական եզր մըն էր ու կը նշանակէր «իմաստաբանական արժէք»: Իսկ «խուժ» եւ «դուժ» համահաւասար են հոս յունարէն «բարբարոս»ին: Այդ անունն է որ կը տրուէր լեզուն (յունարէնը) չհասկցողին: Տե՛ս նաեւ յաջորդ ծանօթագրութիւնը:

- 
- 7 Պէտք է նշմարել որ Ե. դարու թարգմանիչները նույնպէս յունարէն *en emoi*-ը «ինծի հետ» հասկցած են ու այդպէս ալ թարգմանած են. «լինիցիմ այնմ որ խօսիցին ընդ իս՝ խուժ, եւ նա որ խօսիցին *ընդ իս՝ դուժ*»: Մենք (Ագամբէնին հետեւելով) թարգմանեցինք «մէջս խօսողը՝ դուժ»:
- 8 Ագամբէնին գործածած իտալերէն բառն է հոս՝ *fonosimbolismo*:
- 9 Եթէ նիշդ է *mannelle* բառը հոս, որ չկայ իտալերէն բայց Քորսիքայի լեզուով կը նշանակէ եղեր «ձեռակերտ»: Բայց մեր այս գրուածքին անգլիակերտ թարգմանիչը փոխանակ՝ *mannelle*-ի՝ գրած է «*mantelle*»: Այնպէս որ չեմ գիտեր ո՞ր մէկն էր Ագամբէնին ուզածը:
- 10 Ագամբէն հոս եւս՝ չի տար իր մէջբերումին յղումը: Կայ անգլերէն թարգմանութիւն մը. N.S. Trubetzkoy, *Principles of Phonology*, transl. Christiane A.M. Baltaxe, Univ. of California Press, 1969 (2րդ հրատ.՝ 1971): Բնագիրին վերնագիրն էր՝ *Grundzüge der Phonologie*, Vandenhoeck & Ruprecht, Գէօթինգեն, 1958: Անգլերէն 2րդ հրատարակութեան մէջ՝ Ագամբէնին մէջբերած տողերը կը գտնուին էջ 24ի վրայ: Ագամբէնի *The End of the Poem* գիրքին մէջ՝ մէջբերուած տողերը ուղղակի իտալերէնէ թարգմանուած են անգլերէնի:
- 11 Այս մէջբերումին աղբիւրը մեզի յայտնի չէ: Մէջբերուած տողերը չեն գտնուիր Դիոնիսիոս Թրակացիի *Technè grammatiké*-ին մէջ (որուն յունարէն բնագիրը եւ յունարան դպրոցի շրջանին կատարուած հայերէն թարգմանութիւնը տրամադրելի են միասին Նիկոլայ Ադոնցի ռուսերէնէ թարգմանուած գիրքին մէջ. Nicolas Adontz, *Denys de Thrace et les commentateurs arméniens*, traduit du russe, Imprimerie orientaliste, Louvain, 1970, ի դէպ՝ չէ ըսուած թէ ո՛վ էր գիրքը ռուսերէնէ ֆրանսերէն թարգմանողը): Բայց մէջբերումով արտայայտուածին, առաւել «անբան կենդանիներ»ու վերագրուած ձայներուն (*brekekéks* եւ *koí*) կը հանդիպինք *նոյնութեամբ* Ամմոնիոսի մօտ, Արիստոտէլի «Յաղագս մեկնութեան» գործին իր պարզաբանական աշխատանքին մէջ: Տե՛ս Ammonius, *On Aristotle On interpretatione 1-8*, transl. David Blank, Bloomsbury, առաջին հրատարակութիւն՝ 1996, էջ 34: Ամմոնիոսին աշակերտած է Ողիմպիոդորը եւ վերջինիս աշակերտները եղած են Ելիաս եւ Դաւիթ (Անյաղթը): Եւ քանի որ բոլորն ալ գրած են «Յաղագս մեկնութեան» գործին նուիրուած մեկնաբանութիւններ, կ'ենթադրենք որ Ագամբէն մէկուն կամ միւսին մօտ կարդացած է ինչ որ սխալմամբ կը վերագրէ Թրակացի Դիոնիսոսին:
- 12 Յովսեփ Սքալիգեր (Josephus Scaliger, 1540-1609), իտալական ծագումով ֆրանսացի, իր ժամանակաշրջանի ամենէն ծանօթ (եւ միաժամանակ՝ խնդրայայրոյց) գիտուններէն մէկը եղած է: Իրեն կը պարտինք պատմական ժամանակին նկատմամբ նոր մօտեցում մը (1583ի իր գիրքին մէջ ներկայացուած՝ *Opus novum de emendatione temporum*), հնադարեան լեզուներու զուգահեռ պատմականութիւնը նկատի առնելու անհրաժեշտութեան վրայ դրուած շեշտը եւ եւրոպական լեզուներու դասաւորում մը: Յետ մահու (1610ին) լոյս տեսած գրուածքի մը մէջ («*Diatriba de Europaerum linguis*») մանաւանդ կը կարդանք «մայր (կամ մայրաղիւս) լեզուներու» տեսութիւնը (*matrices linguae*): Այդտեղ չորս գլխաւոր մայրաղիւսներ գատորոշուած են (*matrices maiores*, պաւլոնական, լատինական, յունական, գերմանական) եւ եօթը երկրորդական խումբեր (ալբանիական, բրիտանական, հունգարական, ֆիննական, իռլանդական, հին բրիտանական, բասկական): Գլխաւոր խումբերուն մէջ կան բազմաթիւ սերած կամ ածանցուած լեզուներ ու նիւղեր (*propagi-*

---

nes): Նույն ընտանիքին մաս կազմող լեզուներուն միջեւ պատմական ածանցումի ձեւին մասին անշուշտ գաղափար չունէր: Բայց ոմանք զինքը նկատած են հնդեւրոպական լեզուներու տեսութեան նախակարապետը: Տե՛ս այս մասին Otto Zeller, *Problemgeschichte der vergleichenden (indogermanischen) Sprachwissenschaft*, Biblio-Verlag, Օսնաքրիւմ, 1967, եւ Roger Zuber, «De Scaliger à Saumaise, Leyde et les grands Critiques français», *Bulletin de la Société de l'histoire du protestantisme français*, 126 (1980), էջ 461-488: Նաեւ Toon Van Hal, «"Quam enim periculosa sit ea via..." Josephus Justus Scaliger's views on linguistic kinship», *Beiträge zur Geschichte der Sprachwissenschaft* 20 (2010), էջ 111-140: